

Կոտորակների բազմապատկումը/մաս 2

Համարիչ

Հայտարար

Բնական թիվը և կոտորակը բազմապատկելիս, ստացվում է մի կոտորակ, որի համարիչը հավասար է բնական թվի և բազմապատկվող կոտորակի համարիչի արտադրյալին, իսկ հայտարարը հավասար է բազմապատկվող կոտորակի այտարարին:

$$\text{Օրինակ՝ } 5 \cdot \frac{7}{6} = \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} = \frac{7+7+7+7+7}{6} = \frac{35}{6}$$

$$5 \cdot \frac{7}{6} = \frac{5 \cdot 7}{6} = \frac{35}{6}$$

Կոտորակները բազմապատկելիս, ստացվում է մի կոտորակ, որի համարիչը հավասար է բազմապատկվող կոտորակների համարիչների արտադրյալին, իսկ հայտարարը հավասար է բազմապատկվող կոտորակների այտարարին:

Օրինակ՝

$$\frac{3}{4} \cdot \frac{5}{8} = \frac{3 \cdot 5}{4 \cdot 8} = \frac{15}{32}$$

Առաջադրանքներ

- Գումարը գրի առեք արտադրյալի տեսքով.

Օրինակ՝

$$\frac{1}{4} + \frac{1}{4} + \frac{1}{4} = 3 \cdot \frac{1}{4} = \frac{3}{4}$$

$$\frac{4}{9} + \frac{4}{9} + \frac{4}{9} + \frac{4}{9} =$$

$$\frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} =$$

$$\frac{3}{5} + \frac{3}{5} + \frac{3}{5} + \frac{3}{5} + \frac{3}{5} =$$

$$\frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} + \frac{9}{11} =$$

$$\frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} + \frac{5}{8} =$$

$$\frac{1}{50} + \frac{1}{50} + \frac{1}{50} + \frac{1}{50} =$$

- Արտադրյալը գրի առեք գումարի տեսքով.

$$\text{Օրինակ՝ } 5 \cdot \frac{7}{6} = \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} + \frac{7}{6} = \frac{7+7+7+7+7}{6} = \frac{35}{6}$$

$$3 \cdot \frac{5}{8}$$

$$8 \cdot \frac{1}{4}$$

$$4 \cdot \frac{3}{5}$$

$$6 \cdot \frac{1}{9}$$

$$5 \cdot \frac{6}{25}$$

$$20 \cdot \frac{1}{10}$$

$$5 \cdot \frac{4}{30}$$

$$12 \cdot \frac{1}{10}$$

- Կատարեք բազմապատկում՝

Օրինակ՝

$$\frac{3}{4} \cdot \frac{5}{8} = \frac{3 \cdot 5}{4 \cdot 8} = \frac{15}{32}$$

- $\frac{30}{7} \cdot \frac{3}{20}$
- $\frac{4}{25} \cdot \frac{5}{16}$
- $\frac{5}{7} \cdot \frac{7}{15}$
- $\frac{9}{4} \cdot \frac{2}{3}$
- $\frac{30}{8} \cdot \frac{2}{3}$
- $\frac{10}{4} \cdot \frac{3}{25}$
- $\frac{1}{2} \cdot \frac{4}{5}$
- $\frac{7}{4} \cdot \frac{13}{14}$

- Թիվը ներկայացրեք երկու սովորական կոտորակների արտադրյալի տեսքով.

Օրինակ՝

$$\frac{27}{18} = \frac{9 \cdot 3}{2 \cdot 9} = \frac{9}{2} \cdot \frac{3}{9}, \text{ քանի որ } 27=9 \cdot 3, \text{ իսկ } 18=2 \cdot 9$$

- $\frac{10}{24}$
- $\frac{15}{25}$

- $\frac{21}{15}$
- $\frac{9}{18}$
- $\frac{32}{14}$

- Գտեք ուղղանկյան մակերեսը, եթե նրա լայնությունը $\frac{6}{5}$ է, իսկ երկարությունը 5 անգամ մեծ է լայնությունից: